ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/173

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.11.2018թ. թիվ 26-3/21158-18 գրությամբ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Օձունի համայնքապետարանի 14.11.2018թ. թիվ 747-18 գրության հիման վրա, 20.11.2018թ. «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Օձունի համայնքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Օձունի համայնքապետարանը 14.11.2018թ. թիվ 747-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Օձունի համայնքապետարանի կողմից կազմակերպված ԼՄՕՀ-ԳՀԱՊՁԲ-18/28 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն, որը համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ՀՀ գնումների մասին օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Օձունի համայնքապետարանի լիազորված ներկայացուցիչ Արմինե Միքայելյանը:

3. <u>«Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն 27.11.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Օձունի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպվել է ԼՄՕՀ-ԳՀԱՊՁԲ-18/28 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 05.11.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, որին ի պատասխան տրվել է եզրակացություն, առ այն որ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա (05.11.2018թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ

ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված չեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ 59.000 ՀՀ դրամ:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.11.2018թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային պարտավորություններ և նույն արձանագրության նույն կետով որոշել է մերժել «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն 05.11.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 59.000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հայտնում ենք, որ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի մոտ 59.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարման գծով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն 05.11.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Այսինքն, այստեղ ակնհայտորեն առկա է «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի առկա պարտավորության մասին տեղեկացված չլինելու փաստը, քանի որ վերջինիս կողմից որպես հիմք ընդունվել է «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. թիվ 3 արձանագրությամբ՝ Պատվիրատուն չսպասելով Կարգի 45-րդ կետով սահմանված՝ նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրի ավարտին, նույն արձանագրությամբ՝ որոշել է «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ դրանով իսկ խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները և «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ընթացակարգի նախաձեռնման կարգը:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/173 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.11.2018թ. թիվ 26-3/21158-18 գրությունը, Օձունի համայնքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.11.2018թ. թիվ 747-18 գրությունը և կից փաստաթղթերը, ԼՄՕՀ-ԳՀԱՊՁԲ-18/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԼՄՕՀ-ԳՀԱՊՁԲ-18/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 05.11.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 2 և 09.11.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի 27.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, 05.11.2018թ. դրությամբ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.11.2018թ. «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.11.2018թ. տրված եզրակացությունը.

Օձունի համայնքապետարանի կարիքների համար Օձունի մանկական արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ԼՄՕՀ-ԳՀԱՊՁԲ-18/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 1-ին չափաբաժնի համար կազմել է՝ 312.000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 264.000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 330.000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժնի համար՝ 80.000 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի համար՝ 40.000 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի համար՝ 375.000 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնի համար՝ 174.000 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժնի համար՝ 80.000 ՀՀ դրամ, 9-րդ չափաբաժնի համար՝ 80.000 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ԼՄՕՀ-ԳՀԱՊՁԲ-18/28 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 05.11.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության.

- 6-րդ կետի 1-ին ենթակետով որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին:

- 7-րդ կետով որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով, մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում է ուղարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.11.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 59.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 09.11.2018թ. ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ՀՀ գնումների մասին օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- նույն արձանագրությամբ որոշել է «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

«Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն 27.11.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.11.2018թ. «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքի համաձայն՝ առաջացած 59.000 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորությունը գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրվա (05.11.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց 05.11.2018թ. դրությամբ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.11.2018թ. «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Օձունի համայնքապետարանի կարիքների համար՝ Օձունի մանկական արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԼՄՕՀ-ԳՀԱՊՁԲ-18/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված

գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.11.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (05.11.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 59.000 ՀՀ դրամ:

- «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության

ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (05.11.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

- «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին հնարավորություն չի տրվել Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.11.2018թ. թիվ 26-3/21158-18 գրությամբ «Հայր և Որդի Պարանյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ